ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«1» դեկտեմբերի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ _____ Մ. Անանյան

ԳԲԽ-115/16 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով Երևանի ոսկերչական գործարան-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ-ի 22.11.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը և բողոքն առանց քննության թողնելու մասին 28.11.2016թ. գրությունը՝ պարզել ենք հետևյալը.

1. **Երևանի ոսկերչական գործարան-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն) 22.11.2016թ. ներկայացված բողոքով Երևանի ոսկերչական գործարան-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Մեդալների» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԲԸԱՀԱՇՁԲ-8-2» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը

նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որի արդյունքում 02.11.2016թ. ընտրված մասնակից է ճանաչվել «Մակսիմ» ՍՊԸ-ն, որի հետ 03.11.2016թ. պայմանագիր է կնքվել 17 040 000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ հետևյալ մեդալների գնման վերաբերյալ՝

- «Մարշալ Բաղրամյան» մեդալ- 500 հատ
- «Անդրանիկ Օզանյան» մեդալ- 500 հատ
- «Գարեգին Նժդեհ» մեդալ- 500 հատ
- «Վազգեն Սարգսյան» մեդալ - 700 հատ
- «Ծովակալ Իսակով» մեդալ – 1000 հատ
- «Ռազմական համագործակցության համար» մեդալ – 200 հատ
- «Մարտական հերթապահության համար 2-րդ աստիճանի» մեդալ – 150 հատ:

Որպես Ընթացակարգի հիմնավորում Պատվիրատուն նշել է «Գնումների մասի» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետը՝ հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայության հիմքը, ինչը Պատվիրատուի կարծիքով պատասխանատու ստորաբաժանմանը հնարավորություն է տալիս առաջարկել համապատասխան կազմակերպություն, որի հետ կնքվել է պայմանագիր: Պատվիրատուն, որպես լրացուցիչ հիմք նշել է ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 25-րդ կետի 5-րդ ենթակետի 28-րդ անվանատողը՝ «Հայաստանի Հանրապետության շքանշանների, մեդալների և դրանց տուփերի պատրաստում»: Ըստ Ընկերության՝ վկայակոչված հիմնավորումները իրավազուրկ են և նշված իրավանորմերը չեն կարող հիմք հանդիսանալ սույն Ընթացակարգը առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով կազմակերպելու համար, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 20-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ բանակցային ընթացակարգը կարող է կազմակերպվել առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միայն հետևյալ նախապայմանների առկայության դեպքում՝ գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, ինչը պայմանավորված է նրա հեղինակային կամ հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ:

Ընկերությունը բողոքով հայտնել է, որ առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի պայմանները տվյալ դեպքում

չեն կարող և չպետք է կիրառվեն, քանի որ «Մակսիմ» ՍՊԸ-ն միակ անձը չէ, որից հնարավոր է ձեռք բերել Ընթացակարգում նշված մեդալները: Բացի այդ, ՀՀ պետական պարգևների և պատվավոր կոչումների մասին ՀՀ օրենքի 4-րդ գլխի համաձայն թվարկվում են ՀՀ մեդալների անվանացանկը, իսկ Ընթացակարգում նշված 7 մեդալները համարվում են ՀՀ զինված ուժերի մեդալներ, այլ ոչ թե ՀՀ մեդալներ:

Ընկերությունը 22.11.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ ստացված բողոքով խնդրել է՝

ՀՀ պաշտպանության նախարարության «ԲԸԱՀԱՇՁԲ-8-2» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգը, դրա արդյունքում «Մակսիմ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին 02.11.2016թ. որոշումը և 03.11.2016թ-ին կնքված պայմանագիրը չեղարկել և հայտարարել դրանք ապօրինի:

Գնումների բողոքրկման խորհրդին ներկայացված 28.11.2016թ. գրությամբ Ընկերությունը խնդրել է առանց քննության թողնել 22.11.2016թ. ներկայացված բողոքը:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) Կենտրոն է ներկայացրել դիրքորոշումը, որով հայտնել է հետևյալը. «Ընթացակարգը իրականացվել է պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման հայտի հիման վրա: Որպես գնման ընթացակարգի հիմնավորում, գնումը նախատեսվել է իրականացնել 20-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի հիման վրա՝ հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայության հիմքով, ինչը պատասխանատու ստորաբաժանմանը հնարավորություն է տալիս առաջարկել համապատասխան կազմակերպություն, որի հետ կնքվել է պայմանագիր: Հաշվի առնելով, որ գնման ձևը «Բյուջեի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 24.12.2015թ. թիվ 1555-Ն որոշմամբ հաստատվել է «ԲԸԱՀ» և հիմք ընդունելով Կարգի 25-րդ կետի 5-րդ ենթակետի 28-րդ անվանատողը՝ պայմանագիր է կնքվել «Մակսիմ» ՍՊԸ-ի հետ:

3. <u>ԳԲԽ-115/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>

Ընկերությունը 22.11.2016թ. գնումների բողոքարկման խորհրդին է ներկայացրել բողոք, իսկ 28.11.2016թ. գրությամբ խնդրել է առանց քննության թողնել 22.11.2016թ. բողոքը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկում ենք ՀՀ պաշտպանության նախարարության «ԲԸԱՀԱԾՁԲ-8-2» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգը, դրա արդյունքում «Մակսիմ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին 02.11.2016թ. որոշումը և 03.11.2016թ-ին կնքված պայմանագիրը չեղարկելու և դրանք ապօրինի հայտարարելու մասին Երևանի ոսկերչական գործարան-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ-ի կողմից 22.11.2016թ. ներկայացված բողոքը թողնել առանց քննության:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման
բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ 115/16 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար Տ. Գևորգյան